ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

Առաջադրանքների լուծման համար տրվում է **75** րոպե | **7-8**-րդ դասարաններ

- **Յուրաքանչյուր առաջադրանքի համար տրված պատասխաններից ճիշտ է միայն մեկը:**
- **Չլուծված առաջադրանքի համար միավորներ չեն գումարվում և չեն հանվում:**
- **Մրցույթի մասնակիցը կարող է վաստակել առավելագույնը 120 միավոր:**
- **Մրցույթի ավարտին առաջադրանքների թերթիկը մնում է մասնակցի մոտ:**
- **Մրցույթի մասնակիցներին ներկայացվող գլխավոր պահանջը առաջադրանքներն ինքնուրույն և ազնվորեն կատարելն է:**

3 միավոր գնահատվող առաջադրանքներ

1. Յուրաքանչյուր քայլում բառի մեջ փոխելով մեկ տառ՝ ***մատ***-ից ստացել են ***փուշ:*** Ո՞ր բառը պետք է գրել մեղվիկի փոխարեն:

մատ → պատ → պար → լար → → հուր → հուշ → փուշ

Ա. կար ***Բ.*** լոր ***Գ.*** ջուր ***Դ.*** մուր ***Ե.*** լուր

2. Մեղվիկի փոխարեն ընտրիր այն տարբերակը, որը կդառնա ձախակողմյան բառի վերջը և աջակողմյան բառի սկիզբը:

ՓՈՐՁ ( ) ԱԾ

Ա. անոթ ***Բ.*** քար ***Գ.*** վար ***Դ.*** արար ***Ե.*** անող

3. Կենդանական աշխարհի քանի՞ ներկայացուցիչ կա տրված շարքում:

ուղտ, ալոջ, երան, երե, վարուժան, թաղար, կորյուն, կենգուրու

Ա. 4 ***Բ.*** 5 ***Գ.*** 6 ***Դ.*** 7 ***Ե.*** 8

4. Ի՞նչ կստանանք, երբ նկարելուկը լուծենք:

- + NaCl + - Ղ + Բ =

Ա. բանջարեղեն ***Բ.*** հատապտուղ ***Գ.*** ընդեղեն ***Դ.*** միրգ ***Ե.*** կաթնամթերք

5. Բերված բառերը, բացի մեկից, ունեն մի հետաքրքիր ընդհանուր հատկություն: Ո՞ր բառն է զուրկ այդ հատկությունից:

Ա. նուշ ***Բ.*** վիթ ***Գ.*** սրահ ***Դ.*** դրամ ***Ե.*** դաշտ

6. Երբ որևէ ստեղծագործության մասին ասում են, որ այն հեղինակի *կարապի երգն է,* նկատի ունեն, որ դա նրա՝

Ա. առաջին ստեղծագործությունն է ***Բ.*** հասուն տարիքի ստեղծագործությունն է
Գ. սիրահարված շրջանի ստեղծագործությունն է
Դ. վերջին ստեղծագործությունն է ***Ե.*** լավագույն ստեղծագործությունն է

7. *- **Կոմիտա՛ս, երեխաներին քանի՞ գիրք տվեցին դպրոցի գրադարանում:***
Կոմիտասի պատասխանը կա հարցում: Գտի՛ր այն:

Ա. 3 ***Բ.*** 6 ***Գ.*** 9 ***Դ.*** 10 ***Ե.*** 16

8. ***Ձուկ-ձկան, ամառ-ամռան, մանուկ-մանկան, դուռ-դռան, սեղան-սեղանի*** շարքում կա օրինաչափություն, որին չի ենթարկվում բառազույգերից մեկը: Նման օրինաչափությամբ գտեք պատասխանի տարբերակների «ավելորդ» բառը:

Ա. ծաղիկ ***Բ.*** պատանի ***Գ.*** պապ ***Դ.*** գիրք ***Ե.*** ծիծաղ

9. Բերված բառազույգերը, բացի մեկից, կազմվել են որոշակի օրինաչափությամբ: Ո՞ր չի համապատասխանում օրինաչափությանը:

Ա. լռիկ-մնջիկ ***Բ.*** պստիկ-մստիկ ***Գ.*** թելիկ-մելիկ
Դ. ծուռտիկ-մուռտիկ ***Ե.*** չալիկ-մալիկ

10. Համակարգիչը բոլոր տառերը կպցրել է իրար: Արմենը փորձեց շտկել թերությունը և ստացավ մի քանի տարբերակ: Քո կարծիքով՝ ո՞րն է ճիշտ վերականգնված նախադասությունը:

Գերուկլորտղամարդէրնանհևումէրփուքսիպեսքրտինքիկաթիլներըշարվելէինրաչեչոտկարմիրերեսին:

Ա. Գերուկ, լոր տղա, մարդ էր նաև, հևում էր փուռ՛ւ, քսի պես. քրտինքի կաթիլները շարվել էին նրա չեչոտ, կարմիր երեսին:
Բ. Գերուկ, կլոր տղամարդ էր նա, հևիհև ո՞ւմ էր փուքսի պես փնտրում. քրտինքի կաթիլները շարվել էին նրա չեչոտ, կարմիր իրերին:
Գ. Գեր ու կլոր տղամարդ էր նա և հևում էր փուքսի պես. քրտինքի կաթիլները շարվել էին նրա չեչոտ, կարմիր երեսին:
Դ. Գեր ու կլոր տղամարդ էր նա և հևում էր փուքսի պես. քրտինքի կաթիլները շարել էին նրա չեչոտ, կարմիր երեսին:
Ե. Գերուկ ո՞ր տղամարդն էր նա և հևում էր փուքսի պես. քրտինքի կաթիլները շարվել էին նրա չեչոտ, կարմիր երեսին:

4 միավոր գնահատվող առաջադրանքներ

11. Եթե ***պատգամավորություն*** բառից հանենք որմը, ապա մեխը, այնուհետև անտեսենք թվականը և դերանունը, մնացած տառերով ո՞ր բառը կկազմենք:

Ա. ավյուն ***Բ.*** մութ ***Գ.*** նյութ ***Դ.*** արյուն ***Ե.*** ուրույն

12. Գտնելով առաջին տողի արդյունքի ստացման բանալին՝ լրացրու երկրորդ տողի անհրաժեշտ բառը:

հացատուն, առավոտ, ներշնչանք = հառաչանք
սարավանդ, հողամաս, անավարտ = ….

Ա. սաղարթ ***Բ.*** սաղարթաշատ ***Գ.*** սար ու արտ
Դ. սարահարթ ***Ե.*** սաղավարտ

13. Եթե բառերը բաժանվեն բանակների, ապա ո՞ր բառազույգերի բառերը կհայտնվեն հակառակորդ բանակներում:

1. կանուխ-ուշ *2. բերրի-արգավանդ* *3. թեժ-մարմանդ*
4. ազահ-աչքածակ *5. առույգ-աշխույժ*

Ա. 2, 3 ***Բ.*** 1, 5 ***Գ.*** 1, 3 ***Դ.*** 4, 5 ***Ե.*** 3, 4

14. Բերված բառերից չորսը կապված են մի հետաքրքիր օրինաչափությամբ: Ո՞ր բառը չի համապատասխանում այդ օրինաչափությանը:

Ա. կապեր ***Բ.*** ծամեր ***Գ.*** վարձեր ***Դ.*** դաշտեր ***Ե.*** պատեր

Սերտիֆիկատները միայն հասանելի է

15. Գրատախտակին գրված էին ***հաղթամարմին, չմբռնել, անձրևառդ, վաթսուներեք, հիթսունինը, զարթնել, ուղղերեռ, ակընթարթ, ադտոր, պիստոր, խրթին*** բառերը: Ուսուցչուհին ջնջեց սխալ գրված բոլոր բառերը: Քանի՞ բառ նա ջնջեց:

Ա. 3 ***Բ.*** 4 ***Գ.*** 5 ***Դ.*** 6 ***Ե.*** 7

16. Աջ կողմում բերված է տառային ծածկագիր, որում յուրաքանչյուր տառին համապատասխանում է մեկ թվանշան: Նույն տառերին համապատասխանում են նույն թվանշանները: Բերված տարբերակներից ո՞րն է համապատասխանում այդ տառային ծածկագրին:

```
  ԿԱՐՈՏ
+
  ԿԱՐՈՏ
ԹԱԽԻԾ
```

Ա.
```
  20418
+
  20418
  40836
```
Բ.
```
  29618
+
  29618
  59236
```
Գ.
```
  29518
+
  29518
  59036
```
Դ.
```
  29418
+
  29418
  58836
```
Ե.
```
  29718
+
  29718
  59436
```

17. Ինգան գնում է Լուսակերտ, Կարենը՝ Հրազդան, Վարդուհին՝ Տանձուտ: Ո՞ւր է գնում Դավիթը:

Ա. Խնձորեսկ ***Բ.*** Երևան ***Գ.*** Վանաձոր ***Դ.*** Բերդավան ***Ե.*** Դեղձավան

18. ***«Լավություն արա, ջուրը գցիր, ձուկը չիմանա, Աստված կիմանա»*** առածը նշանակում է՝

Ա. եթե ձուկ ես բռնում, մեկ-մեկ էլ կերակրիր նրան
Բ. ձուկն Աստծո ստեղծածն է և չի կորչի
Գ. ուրիշի համար արված լավ գործը չի կորչի
Դ. լավություն արա, ջուրը գցիր, կկակղի, կուտեն
Ե. լավությունը ձուկ է, այսօր այստեղ է լողում, վաղը՝ այնտեղ

19. Բակունցի ո՞ր հերոսի մասին է քառատողը:

Պարզ ու անմեղ էր, շիտակ ու բարի,
Եռում էր արյունն ամեն գարունքի,
Տնից ելնում էր ու ախոռ մտնում,
Իրեն կարոտած կովերին շոյում:

Ա. Բաղի ***Բ.*** Ավի ***Գ.*** Հազրո ***Դ.*** Պետի ***Ե.*** Սիմոն

20. Անահիտն ունի ինը խորանարդիկ, որոնցից յուրաքանչյուրի բոլոր նիստերի վրա գրված է մեկական տառ. այդ տառերն են՝ ***տ, շ, դ, ր, ա, մ, ա, լ, ա:*** Անահիտը քանի՞ խորանարդիկ պետք է դնի կողք կողքի, որ ստանա հնարավոր ամենաերկար բառը:

Ա. 9 ***Բ.*** 8 ***Գ.*** 7 ***Դ.*** 6 ***Ե.*** 4

5 միավոր գնահատվող առաջադրանքներ

21. *Ո՞վ կհանդիպի, ո՞վ կբարևի,*
Ո՞ւմ հոգեհամբույր խոսքը կլսեմ:
Ո՞ւմ ուրախացած դեմքը կարևի՝
Բարեկամաբար հրճվանքով վսեմ:

Ո՞ր բառն իր հոմանիշը չունի բերված քառատողում:

Ա. վես ***Բ.*** նսեմ ***Գ.*** ցնծություն ***Դ.*** երես ***Ե.*** պայծառանալ

22. Ի՞նչ նախադասություն է գաղտնագրված նկարելուկով:

1 Ն 19, , Ք , ԲԲԻ

Ա. Մեկին ու տասնիննին ասեք՝ ձուկ բերի: ***Բ.*** Մեկը իննին ասում է՝ ձո՛ւ բերեք:
Գ. Մեկնարկին մնաց տասնինը րոպե: ***Դ.*** Մեկնումեկին ասեք՝ ձու բերի:
Ե. Մեկին ու տասին ասել ենք՝ կբերեն:

23. ***«Երեկ հինգշաբթի չէր, այսօր ո՛չ երկուշաբթի է, ո՛չ չորեքշաբթի, իսկ վաղը կիրակի չի լինելու»:*** Շաբաթվա օրերից քանի՞սն են համապատասխանում «այսօրվան»:

Ա. ոչ մեկը ***Բ.*** մեկը ***Գ.*** երկուսը ***Դ.*** երեքը ***Ե.*** չորսը

24. Ո՞ր բառի մեջ չկա ուտելը հիշեցնող հնարամիտ թաքնագիր:

Ա. երեկո ***Բ.*** պարեկություն ***Գ.*** ցերեկային ***Դ.*** կորեկահաց ***Ե.*** վարակիչ

25. Օգտագործելով ***տակ*** և ***վրա*** բառերը՝ ստեղծել են այս նկարելուկը:
Ի՞նչ նախադասություն է գրված նկարելուկով:

Գ ՑԻ Պ
ԻՑ Մ Տ6

Ա. Գետակի մոտից մի վրացի պտտվեց:
Բ. Գիտակից մի վրացի պիտակ տվեց: ***Գ.*** Գետակից մի պատ ջուր ցայտեց:
Դ. Գիտակից մարդը պիտակ տվեց: ***Ե.*** Գետակի վրա ցանց կա:

26. Հայերենի յուրաքանչյուր տառ ունի նաև թվային արժեք (Ա=1, Ժ=10, Շ=500, Փ=8000): Հետևյալ բառերից որի՞ տառերի թվային արժեքների գումարն է ամենամեծը:

Ա. աշուն ***Բ.*** գրավ ***Գ.*** նմուշ ***Դ.*** զանգ ***Ե.*** վագր

27. Ո՞ր բառը պետք է ընտրել շարքը լրացնելու համար:

բեռնաթափ - փողկապ - պարերգ - գաղթօջախ - ...

Ա. խոյ ***Բ.*** խրոխտ ***Գ.*** խոհանոց ***Դ.*** խավիծ ***Ե.*** խոտհունձ

28. Օգտվելով տառանուններից՝ գտիր, թե ինչ նախադասություն է գաղտնագրված:
ՍԴՆՇՔՆԿՈՐՆ

Ա. Սեդան ու Նշանի քենին կորան: ***Բ.*** Սարդի ոտքերը կոր են:
Գ. Սեդան ու Շաքեն կորան: ***Դ.*** Սեդան ու Շաքեն կենվոր են:
Ե. Սեդան շաքար կունենա:

29. *Հավ սիրամարգ մտավ մարագ,*
Որ ժողովի հատ մարգարիտ.
Ո՛չ կշտացավ հավ սիրամարգ,
Ո՛չ վերջացավ հատ մարգարիտ: (ժողովրդական հանելուկ)

Ա. հավանոց ***Բ.*** գիր ***Գ.*** տետր ***Դ.*** գրադարան ***Ե.*** գրախանութ

30. Տառերը գրված են ինչ-որ օրինաչափությամբ: Պատասխանի տարբերակներում տրված տառերից ո՞րը պետք է դնել մեղվիկի փոխարեն:

h, փ, մ, ա, մ, h,

Ա. h ***Բ.*** մ ***Գ.*** ս ***Դ.*** ն ***Ե.*** ա

«Այբ» հասանելիությամբ